

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԻ ԵՐԵՐԸ ԵՒ ՄԱՐԿԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագիրն ԿԱՆԻՍԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 զըշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր — Վեցամսեայ բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան նաւակադրոշմ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը դրկուի. այնուհետեւ բաժանորդագիրն չը վճարողը կը դադրի թիւթ ընդունելէ:

Ծանուցման տողը 2 շուրուշ:

# ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ը

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՆԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԷԼ

Առ ՏՏՈՐԷՆ-ՀՐԱՄԱՐԱԿԻՅ

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ

Պոլիս, Պաշէ-Կափու, Թաշ Խան, Թիւ 50

در علیّه ده بفتح قوسنده طاش خاندۀ ۵۰ نومروده

«زاغیک» غزتیسی مدیری پالاقاشیان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 Փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարս

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 12

Շ Ա Բ Ա Թ

3 Ա Պ Ր Է 1893

ԽՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

## ԿԱՐԵՒՈՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Ջատկական տօնի առթիւ, անգամ մը եւս մեր մտքին ներկայացաւ կարեւոր խնդրոյ մը համար վերջապէս տնօրինութիւն մ'ընելու անհրաժեշտ հարկըն:

Հայ մարդուն սիրտը աշխարհի վրայ ոչ մէկ գաղափարի հետ այնքան սիրով եւ սերտիւ չէ կապուած որքան իւր կըրօնին եւ իւր եկեղեցւոյն հետ: Ի սկզբնէն անտի չի մը ունեցած եւ չունիմք աւելի ժողովրդային — բառին իսկական նշանակութեամբ ժողովրդային — հաստատութիւն մը քան մեր Սուրբ Եկեղեցին: Հոն միայն գտած է մեր ժողովուրդը եւ հոն միայն պիտի գտնէ հոգեւոր սնունդը ու միտքի տնօրինութիւն: Հոն պիտի ոգեւորուի սրբազան մտածումներով եւ հոն միայն առիթ պիտի ունենայ զգալու իւր տոհմային ինքնութիւնն ու կարեւորութիւնն: Ուրեմն որքան աւելի ուշագիւր եւ նախանձախնդիր լինիմք մեր եկեղեցական գործոց, այնքան աւելի ծառայած կը լինիմք մեր ժողովրդեան բարւոյն:

Կը հասկցուի թէ՛ պէտք է զգուշանա՞նք թափաքէ որ մեր ժողովրդեան որ եւ է մէկ գաղափարով իւր եկեղեցիէն պաշտօններու եւ հեռու պահելու կը ծառայէ: Պէտք է եկեղեցին այն փիւսկն ունենայ որ հոգեկան մեծ հաճոյքով յաճախեն հոն ամէն գաղափարի ազգայինը, ծերն ու երիտասարդն, ռամիկն եւ ուսեալն, եկեղեցին պէտք է հրապուրէ զանոնք եւ հոգեկան հրճուանքով լեցնէ: Բայց ի՞նչպէս կարող է իւր այս բարոյացուցիչ գերը կատարել եկեղեցին, առանց ներդաշնակ երգեցողութեան, առանց կանոնաւոր ընթերցմանց Ս. Գրոց, եւ առանց հրահանգիչ հոգեւորական քարոզչութեան:

Մեր եկեղեցեաց մեծ մասին մէջ այս երեքն ալ կը պակսին: Քարող կայ, բայց անխմաստ եւ անհամ քարոզներ, որոցմէ ռամիկ ժողովուրդը եւ ուսեալ գաղափարը հաւատարմապէս բան չեն հասկնար: Երգեցողութիւնը շատ տեղեր անկանոն եւ խառնակ՝ ունկնդիր

ժողովուրդն հոգեպէս վերացնելու բընութենէն բոլորովին զուրկ: Ընթերցմունք Ս. Գրոց՝ մեծաւ մասամբ անհասկնալի:

Թողով առ այժմ քարոզի եւ երգեցողութեանց խնդիրը, երկու խօսք միայն ընեմք ընթերցմանց մասին:

Երբ կ'ըսեմք թէ մեր եկեղեցեաց մէջ Ս. Գրոց ընթերցմունք մեծաւ մասամբ անհասկնալի են, չկարծուի թէ դրաբարի ու աշխարհաբարի խնդիր յարուցանել կ'ուզեմք: Այս մասին մէկ խօսքով կ'ըսեմք թէ, ինչպէս ցարգ, այսուհետեւ եւս պէտք է դրաբար մնայ մեր եկեղեցական լեզուն:

Մեր եկեղեցեաց մէջ Ս. Գրոց ընթերցմունք անհասկնալի կը մնան ո՛չ վասն զի դրաբար են, այլ վասն զի չեն կարդացուիր այնպէս ինչպէս պէտք է որ կարդացուին. պիտի համարձակիմք ըսելու որ մեր քահանայք ու վարդապետք մեծաւ մասամբ չեն գիտեր կարդալ Ս. Գրքը: Կարդալ գիտեն այն ատեն կարելի է ըսել, երբ իրենց կարդացածն հասկնալով ու հասկցնելով կարդան:

Սովորութիւն է մեր եկեղեցեաց մէջ՝ եղանակով կարդալ Ս. Գրքը: Բայց եղանակներու մէջ պարզութիւն եւ միօրինակ ձեւ ամենեւին մի՛ վնասէք: Ամէն քահանայ եւ ամէն վարդապետ ու եպիսկոպոս իրեն համար եղանակ ունի չինած: Աւտարան կը կարդան, ուշադրութեամբ մտիկ կ'ընեն ու բան մը իսկ չեն կարող իմանալ, հասկնալ, այնքան անյարմար չնշտեր կը դնեն մէջը, այնքան աններդաշնակ ելեւէջներ կը յօրինեն: Խռպոտ ձայն մ'է կը լեցնէ տաճարը, բայց արտասանուած բառերը չեն կարող իմանալ, ըմբռնել, ո՛ր մընայ ամբողջ պարբերութիւններ, ո՛ր մնաց ամբողջ ինչ որ կարդացուեցաւ. չեն կրնար՝ վասն զի չկայ յստակ արտասանութիւն, կանոնաւոր առդանութիւն եւ գիտակցութեամբ ընթերցումն: Մինչեւ իսկ վարդապետներ ունիմք որք իրենց բոլոր մեծութիւնը, բովանդակ արժանաւորութեան ապացոյցը կը գտնեն Ս. Գրոց ընթերցումը այդպիսի այլանդակ եղանակներով եւ բռնազրօսիկ չնշտերով կատարելուն եւ

խաղառ անհասկնալի ընելուն մէջ: Կը կարծեն որ այդ կերպով ժողովուրդը կը հիացնեն եւ մեծ համարման կ'արժանանան, մինչդեռ հասկացող, զարգացած գաղափարներ ծիծաղը միայն կը շարժեն իրենց վրայ, իսկ հասարակ ժողովուրդը կը պահեն միշտ նոյն տգիտութեան մէջ՝ Ս. Գրոց նկատմամբ:

Հիմա ամենէն աւելի հասկցուած չինելով ժողովուրդն իւր եկեղեցւոյն հետ սերտիւ կապելու կարեւորութիւնն, ժամանակ է այլ եւս որ վերջ տրուի այսպիսի այլանդակութեանց: Պէտք է Ս. Գրքը ժողովրդեան կարգան՝ կարելի եղածին չափ պարզ առոգանութեամբ եւ յստակ ու հասկնալի կերպով, որպէս զի ունկնդիր ժողովուրդն բան մը իմանայ, բան մը հասկնայ, եւ ընթերցումն ծառայէ իւր նպատակին: Եկեղեցական իշխանութեանց պարտքն է հոգ տանիլ այս բանին: Մինչեւ իսկ եկեղեցեաց մէջ Ս. Գրքը կարդալէ արգիլուելու են այն քահանայք ու վարդապետք որք հասկնալի ընելու կերպով կարդալու պատրաստութիւնն եւ յարմարութիւնը չունեն: Յ. Գ. Փ.

## ՀՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՄԵՆՈՐԵՐԷ

Այլ եւ այլ տեղեր Հայ եկեղեցւոյ Աւագ շաբթուան արարողութիւնք իրարմէ կը տարբերին. այս մասին փոքրիկ ճաշակ մը տանք մեր ընթերցողաց: Սոյ մէջ ոտնուայի արարողութեան կը մասնակցին բոլոր ժողովրդականք, այր, կին, ծեր տղայ, կուսան. ամենուն ոտքերը կը լուացուին: Աւագ ուրբաթ օրը, Պոլսոյ մէջ գերեզման կը շրջեցնեն եկեղեցեաց բակերը: Ղալաթիոյ եկեղեցւոյն գերեզմանի թափորը շրջակայ փողոցները կը պատուեն ըստ Յունաց. գաւառաց մէջ եւ ի Կովկաս գերեզմանի տեղ խաչ շրջեցնելու սովորութիւն կայ: Զէյթունի մէջ եկեղեցւոյն մէկ կողմը սովորական դադաղ մը կը դնեն, վերմակ մը ոլորելով շապիկ կ'անցունեն վերայէն եւ քահանայի նման կ'զգեստաւորեն փորուրարով, բազմանով, վակասով եւ թագով. չորս քահանայք, կամ եթէ այդչափ չկան, չորս տիրացու, ի-



ընդ աւսերուն վրայ կ'առնուն այդ դա-  
դաղն և փողոցներուն մէջ թափոր կը  
շրջին երգեցողութեամբ. բոլոր ժողո-  
վաւրդը դադաղին ներքեւէն կ'անցնի,  
ցաւոցը բժշկութիւն և այլ շնորհներ  
խնդրելով:

Լացի գիշերուան ժամերգութիւնն  
ի Պոլիս, քանի տարի է ի վեր, սովորու-  
թիւն եղած է արեւամուտէն 1-2 ժամ  
յետոյ սկսիլ. բայց ամէն տեղ կէս գի-  
շերէ յետոյ կը կատարեն. իբր երկու  
դար յառաջ գրուած Յիսուսի կտակ մը  
կը կարգան շատ տեղեր: Տասն տարի  
առաջ թիֆլիզի ուսեալ քահանայից մին  
առաջին անգամ խորհեցաւ այդ կտա-  
կին ընթերցումը զանց ընել և անոր  
տեղ ընտիր քարոզ խօսեցաւ. դժբաղ-  
դաբար այդ միջոցին գողեր քահանային  
առնել թալանի տուին. միամիտ ժողո-  
վաւրդը հաւատաց թէ աստուածային  
պատիժ մ'էր այդ, կտակը կարդալ չու-  
զելուն համար:

Ս.

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԵՊԵՐ

## ԲԱՂԴԱՒՈՐԸ

Ե.

## ԹԵՐԵԶԱ

Ժամադրութեան ճշդ ապահ ցտնուե-  
ցայ. Մագրիզիզի նորաշէն փողոցներէն  
միոյն մէջ էր Թերեզայի կրկնայարկ բնա-  
կարանը. օդասուն, պայծառ, հանգստա-  
ւէտ: Ամուսն ինձ ընդ առաջ դիմեց զեզուն  
ցնծութեամբ. և հրաւիրուեցայ պարզ  
այլ ճաշակաւ կահաւորուած սենեակ մը.  
Փոքրիկ բազմոցի մը վրայ փռուած հազիւ  
ութամեայ մանկիկ մը, խիստ սիրուն, գի-  
րուկ, խաժակն ու չիկաճեր, թեւերն ու  
ստքերն օղին մէջ կը ծածանէր, և թռչնոյ  
նման կը ճռուողէր. խնամով և մաքուր հագ-  
ուած հինգ վեց տարեկան երկու ուրիշ  
փոքրիկներ ալ, մանչ և աղջիկ, նոյնպէս  
չնորհագեղ և ամենայնիւ նման միմեանց,  
ոտոտակելով շուրջ կը գառնային իրենց մօ-  
րեն:

Գրեթէ խառտեալ, բոլորչի դիմօք,  
ծովու թուխ կապոյտ գոյնի վրայ կարծես  
գրականտիրոն բանուած մեծ աչքերով, հա-  
մարձակ, զուարթ ու ուշիմ նայուածքով,  
չափաւոր ու կատարելապէս ներդաշնակ քիթ,  
ականջ ու բերանով, առատ ու գեղնորակ  
մազերով, լայն ու թեթեւ իմն կամարա-  
ձեւ կուրծքով, միջահասակ, գրեթէ յոյր,  
համակրելի աղջիկ մ'էր Թերեզա, թեթեա-  
լարժ, միշտ երանարոյր ծալիտ մը շրթանցը  
վրայ. 3) ի մօտ՝ հազիւ 20 տարու կ'երե-  
ւէր. հագած էր դիւպակէ անգարդ այլ բա-  
րեձեւ շրջագգեստ մը, կարճ ինչպէս կը  
հագնին գարնանական աղջիկներ:

Արժան է աստ յաւելուլ, թէ եկնի-Գա-  
բուր բարեկեցիկ ընտանիքի մը զաւակ էր  
ինք. հայրը միջակ վաճառական մ'էր. 2-  
3000 ոսկի գրամադիւսոյ տէր, աղջկանը լաւ  
կրթութիւն մը տալու փոյթ տարած էր.  
Թերեզա բարեմայն ու սրամիտ, սիրելի ե-  
ղած էր առ հասարակ իւր դաստիարակաց.

հոգեբանութիւն, պատմութիւն և հայերէն  
լեզու գաստիսած էր իրեն, այս երեք ա-  
ռարկայներն ալ հոգեով չափ կը սիրեր և  
գասին մէջ իրմէ կարողը չը կար. գաղղիե-  
րէնը քով կը հասկնար. դասական հեղինակ-  
ներն ու իմաստասիրական գրաւածներն հա-  
ճոյքով և մտաու թեամբ կ'ընթերցայ. աղ-  
ջկան մը համար անակնկալ մ'է այս, բայց  
Թերեզայի համար ճշմարտութիւն. ձեւի և  
կարի մէջ ալ յաջողակ էր յոյժ. Զինքը տես-  
նելով յուզուեցայ ի յիշատակ այն աւուրց,  
յորս գիշեր ցերեկ կը տքնէր գարնոցի ման-  
կութեան օգտակար լինելու և պատրաստե-  
լու համար նոր սերունդ մը, աղջիկ ու  
հզօր նկարագրի տէր, լուսամիտ ու զգաստ:

— Ահա ես և մանկուհի իմ, ըսաւ, մին-  
չեւ աչքերուն մէջ կարմրելով և ինձ մօ-  
տեցնելով փոքրիկները, զորս զգուեցի:

— Տակաւին դու ալ մանկուհի մ'ես, Թե-  
րեզա, պատասխանեցի շրջագգեստին նայե-  
լով:

— Ո՛հ, Ռուբէնս փափաք ունեցաւ որ  
զձեզ զարոյցի զգեստով զիմաւորեմ:

— Շատ վայելք է քեզի, յարեց Ռուբէնս.  
Թերեզա դուրս ելաւ և վայրկեան մը յե-  
տոյ եկաւ պնակ մը միգրեղնով՝ զոր սենե-  
կին մէկ անկիւնը դնելով կոչեց երկու անդ-  
րանիկները:

— Հրանտ, Զարուհի, հոս եկէք, նստէք  
զորդին վրայ. պէտք է որ առանց աղմուկի  
խաղաք, եթէ ո'չ հայրիկը կը սրղոյլի. ահա  
ձեզի խնձոր ու կաղին:

Անմիջապէս կ'առնէր որ Թերեզային  
ձայնը գործող հետ հրամայող շէտ մը  
կ'զգենուր տղայոց հետ խօսելու առեւ,  
նոքա ալ օտարականի մը ներկայութենէն  
աւելի իրենց մօր նայուածքէն ու խօսքերէն  
ազգուած՝ վազեցին այդ անկիւնն ու ծալ-  
լապատիկ նստելով, պտուղները իրենց մէջ  
բաժնել ու հանգարտօղէն խաղալ սկսան:

Այն առեւ Թերեզա նստաւ փոքրիկ բազ-  
մոցին վրայ, երրորդ մանկիկին քով:

— Ի՞նչպէս, դո՛հ ես կեանքէդ, հար-  
ցուցի իրեն:

— Կատարելապէս դո՛հ ու երջանիկ. ա-  
մուսինս բարի, աշխատասէր ու անձնուէր  
է, զաւակներս գեղեցիկ ու շնորհալի, ա-  
մէնքս առողջ. ծնողքս թէպէտ դատ կ'ապ-  
րին, բայց միշտ իրենց շուքը կը վայելենք.  
Իրենց օրհնութենէն ուրիշ բանի չեմ բաղ-  
ձար:

— Էփէնտիկը համար այդքան բարի մի՛  
վկայեր. կ'ենթադրեմ որ գէթ երբեմն ըզ-  
քեզ վշտացնէ. ինձ իմաց տուր, և ես զայն  
կարգի կը բերեմ, ըս' ծիծաղելով:

— Թերեզա վշտացնեմ, իմ հրեշտակս,  
Աստուած չընէ, ըսաւ Ռուբէնս:

— Այո՛, երբեմն վիշտ կը պատճառես ինձ,  
Ռուբէն, յարեց Թերեզա, չե՞ս յիշեր, անց-  
եալ ամսու մէջ ունեցած հիւանդութեանդ.  
Համար ի՞նչ յուսահատութեան մէջ ձգեցիր  
զիս, որքա՛ն լացի, նայէ որ անձիդ աւելի  
խնայես և չհիւանդանաս. տե՛ս, Հրանտ  
ի՞նչպէս զլուխն աս կողմ դարձուց. աւելի  
աղկէ է որ հայրիկը պտուղ չբերէ, քան  
թէ շատ աշխատի և հիւանդ ըլլայ, հէ՛,  
այնպէս չէ՞. զաւակս:

— Այո՛, մայրիկ, հայրիկը հիւանդ ըլ-  
լայ նէ դուս կուլաս:

— Մտքերնուդ ի՞նչ անցուցիք արդեօք,  
երբ լուսնայափոխի կրպակին մէջ զիս տե-

սաք, վրայ բերաւ Ռուբէն. ըսիք անշուշտ  
որ այս տղան հոգեով, սրտով ու մարմնով  
կորսուած է. Թերեզա տղատեց զիս ա-  
պականութենէն և հետեւաբար ստոյգ մահ-  
ուընէ մը. հիմա տեսէք թէ ո՛րքան երջանիկ  
եմ. ճշմարտ կ'ըսեմ, կնիկ, յարեց Թերե-  
զային ուզելով խօսքը, դուս ինձ համար  
նախախնամութիւն մ'ես, քու սիրոյդ հա-  
մար սիրտս պզտիկ կ'զգամ:

— Շողոքօրթ, ըսաւ Թերեզա, ամէն  
անգամ աս լեզուները կը գործածես, վասն  
զի գիտես թէ կիները գովասանք լսելու  
համար հոգի կուտան. սիրուհիի պէս վրաս  
կը դուրգուրաս և իշխանուհիի պէս կը յար-  
գես. իմ երջանկութեան համար երբ այդ-  
քան փոյթ առնելը կը տեսնեմ, պէտք չէ՞  
որ ես ալ զքեզ բարեբաւտ ապրեցնելու  
ջանք ընեմ. օ՛ն, ալ ուրիշ նիւթի վրայ խօ-  
սեցէք, մինչեւ որ ես գամ:

Թերեզա մեկնեցաւ:

Զ.

## ԳԱՆՁԱՆԱԿԸ

Հրանտ ու Զարուհի կը շարունակէին,  
սենեկին անկիւնը նստած, կաղիններով խա-  
ղալ հանգարտիկ. ութամեայ մանկիկը կը  
ճլուրջար ու անընդհատ կը շարժէր չորս ան-  
դամները. Ռուբէն ծովահայեաց պատու-  
հանէն կը զխտէր հորիզոնը մօքի յափշտո-  
կութեամբ և երբեմն աննշան խօսքեր կ'ուղ-  
ղէր ինձ. իսկ ես, այս երանուէտ խաղաղու-  
թեան տեսարանէն դիւթուած, անբացատ-  
րելի խոկմանց անձնատուր կը լինէի. սոս  
մանկիկն, որ չը լար երբ զինքն այսպէս  
պառկած կը թողուն, Հրանտ ու Զարուհի,  
որ դեռ երախայ, իրենց մօր հրամանին  
կամակար կը հպատակին, Ռուբէն, այն մո-  
լորեալն ու ցատկոտը, որ կնոջն հաճոյ լի-  
նելու համար այնքան կը քծնի անոր և չը  
զիմաղրեր խօսքերուն, այս կինը, իմ ա-  
շակերտուհիս, որ յաջողէր է ընկերութեան  
համար կորսուեալ համարուած մարդու մը  
հետ միանալով դրախտը վերաշինել...

Փառօղէ մը ներս մտաւ Թերեզա և  
ճաշի հրաւիրեց զմեզ. թէպէտ նոթի, ա-  
ռաջին այցելութիւնս ըլլալուն ուղեցի մեր-  
ժեւ, բայց վերջապէս համակերպեցայ. իբր  
Վե տարեկան սպասուհի աղջիկ մ'եկաւ փոք-  
րիկներուն պահպանութիւն ընելու և մեք  
սեղանատարձը գնացինք, ոչ-ընդարձակ քա-  
ռակուսի վայր մը. մաքրութիւնը, կարգա-  
ւորութիւնը, անկեղծ հիւրասիրութեան մը  
բոլոր զգուիչ ցոյցերը, կերակրոյ համեղու-  
թիւնը, զուարթարար գինոյ քանի մը բա-  
ժակ և Թերեզայի նրբամիտ, զուարթ ու  
յանկուցիչ խօսակցութիւնն ու անակնկալ  
յայտարարութիւններն յանձնափոխ զիս զուար-  
թացուցին և անորձակա գրգռեցին. ցյադ  
կերայ. ժամէ մ'աւելի մնացինք սեղանին  
վրայ. մեր խօսքերը կ'ընդմիջուէին յաճախ  
երբ Թերեզա կը թողուր զմեզ, երթալ աչ-  
քէ անցունելու փոքրիկներն և, թերեւս,  
կաթ տալու կրտսերագունին, կամ պնակ-  
ներն ու կերակրոյ ամանները փոխելու հա-  
մար:

— Փորձառու և բարեկամ անձի մը խոր-  
հրդոց պէտք ունէինք, և խորհեցայ ձեզ  
գիւմել, ըսաւ Թերեզա, երբ ճաշելու սկսանք.  
Ռուբէնս մեր ամուսնութենէն երկու տարի  
յետոյ գործի սկսաւ և չահած դուամարին



մէկ մասը միայն ծախսելով, մնացածը, երբեմն երեք, երբեմն չորս կամ հինգ սակի, ինձ յանձնելու ազնուութիւնն ունեցաւ. հին պարտքեր վճարեցի. պղտիկներն իրարու ետեւ հասան, անոնց ծննդեան, մկրտութեան, զգեստի, ինչպէս և իմ անձնական ծախքերս ըրի. բայց քանի կը տեսնէի ամուսնոյ աշխատութիւնն և միւս կողմանէ օրական ծախուց հետզհետէ աճիլը, այնքան ես ալ խնայող եղայ. Աստուած ալ օրհնեց մեր ընտանիքը, և այս օր դժբաղդութենէ չվախնալու չափ դրամ ունինք:

— Թերեզա երբեմն տղայ կը դառնայ, ըսաւ Ռուբէն, ես գիտեմ որ ընդունած գումարէն որքան ալ խնայողութիւն ընէ, տարին քսան սակի չաւելնար, հինգ տարուանը կ'ընէ 400 սակի. 40 սակի չափ հին պարտքերուն վճարուած կը համարիմ, կը մնայ 60 սակի. ասոր պարզապէս կ'ըսեն քանի մը զրուշ ունինք, ինչ կարեւորութիւն կուտաս և այդ մասին խօսք կը բանաս:

— Սիրելիս, պատասխան տուաւ Թերեզա. կեցիք ես հաշիւը տամ. առաջին ամսն սկսեալ աւելցած դրամն հօրս յանձնեցի, որպէս զի իւր առեւտրին մէջ մեր հաշույն գործածէ. տարեգլուխ՝ գումարը կրկնապատկուած էր. չափէն վճարեցի հին պարտքերը. շարունակեցի հօրս տալ հետզհետէ ըրած խնայողութիւններս. նա ոչ վաճառատան, ոչ գրագրի և ոչ ալ իւր աշխատութեան համար վարձք կ'ուզէր. այսպէս գրամագլուխ ու շահ գիշուեցան, և, ըսէ տեսնեմ, Ռուբէն, այս հաշուով այսօր ո՞ր չափ ստակ ունենալ կ'ենթադրես:

Թերեզայի գէմքը կը ճառագայթէր. Ռուբէն ինքիւն իր և, հիացած, Պիւթեան հարցուկին բերնէն պատգամի սպասելու պէս անձկութեամբ լի, այլ պատասխան մը տալու ստիպեալ,

— 200 սակի ըսաւ:

Է.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

— 1000՝ սակի, գոչեց Թերեզա շնորհալի քահանայ մը:

Ռուբէն ցնցուեցաւ. յայտնի կը ցուցնէր թէ կնոջը հաւատալ չէր ուզէր. գիտէր որ անոր հայրը պարկեշտ և հնարամիտ վաճառական մ'էր, գործերը յաջող. բայց հինգ տարուան մէջ մասն մասն անոր քով հաւաքուած փողը գումարներուն այդպիսի անհամեմատ քանակութեան մը հասնիլն անհաստատի կը թուէր իրեն:

— Հայրս, յարեց Թերեզա, տասն օր յառաջ հաշուեցոյց մը զրկած էր վրան՝ Թերեզայիս պահանջքը գրուած, առանց մանրամասնութիւնը քննելու գումարին նայեցայ, 1028 սակի նշանակուած էր. թէ ինչպէս գործածեք և զմեզ այսքան հարստացուցեր է, չեմ գիտեր. զգացած անհուն ուրախութիւնս շատ չտեսեց սակայն. Թերեզայիս պահանջքը բաւերէն սաստիկ զգածուեցայ. կը յիշէս, Ռուբէն, որ անցեալ շաբաթ օր հօրս տունն երթալու թոյլտուութիւն խնդրեցի քեզէ, և Նէնի-Գաբու զնացի. ահա թէ ինչո՞ւ համար. աղաչեցի հօրս որ հաշուեցուցին վրայ իմ անունս աւրէ և քու անունդ գրէ. հայրս մերժեց, մայրս ալ իրեն համակարծիք գտնուեցաւ, երկուքն ալ

սառն էին քեզ դէմ. երկու ժամու չափ՝ պերճախօսութիւն չմնաց թափեցի, «եթէ իմ երջանկութիւնս կ'ուզէք, ըսածս ընելու էք, ըսի, այրս ամէն բան թող ունենայ, ես ալ զինքը կ'ունենամ, ուրեմն ես ամէն բան կ'ունենամ, ինչո՞ւ զիս հարստացնելով ամուսնոյս աչքէն հանել և անդորրութիւնս վտանգել կ'ուզէք». անհամարելի մնացին. այն ատեն յուզուած, և գուցէ ծնողացս պարտաւոր եղած յարգանաց սահմանները մոռնալով, պատռեցի հաշուութուցը, ու «Ձեր շնորհիւ հարստութիւն վայելած եմ, ըսի, բայց աչք չունիմ անոր. ամուսնոյս սիրտը մեծագոյն հարստութիւնն ու բազմէն է զոր կրնամ երազել, հոն կ'ուզեմ հանգչեցնել գլուխս, անով միայն երջանիկ եմ, ոչ ինչ թող խռովէ այս վիճակս, և եթէ դուք ինձ նկատմամբ այդքան անգութ և սիրեւոյս ատեցող էք, մոռցէք, զիս ալ, ձեր թողնեքն ալ, և այդ դրամը կարօտներուն բաշխեցէք»: Դէմքս այլայլած, աչքերս արտասուօք լի, ոտք ելայ և մօտեցայ համբուրելու անոնց ձեռքը, որպէս զի մեկնիմ. յանկարծ մայրս վաղեց, գրկեց զիս, ջերմ համբոյրներով ծածկեց երեսներս, ծննդական գորովայն անբաւ խանդաղատանքով ջանաց լացս գողրեցնել, և «ուզածիդ պէս ըլլայ, Թերեզաս, » ըսաւ հեկեկալով. տեսայ որ հայրս ճիգեր կ'ընէր ինքզինքն անխռով ցուցնելու. նետուեցայ իւր գիրկը, բառ մը միայն արտասանեց, «աղջիկս», և արտասուքի խոշոր կայլակներ հոսեցան երեսն ի վար, յազթած էի. այս անգամ ուրախութիւնն էր որ կ'արտասուեցնէր զիս: Ձեք աչքան գովեցի, Ռուբէն, որ հիմա ժամ ժամ կը փափաքին այս առաքիլի փեսան անով անգով հիւրընկալել իրենց տան մէջ, մինչեւ իրենց կեանքին վախճանը. աղայքս ալ հոն աւելի խնամոց ու գգուանաց աւարկայ պիտի ըլլան. բայց կեանքի այդ պիտի փոփոխութեան մ'որոշում տալ իմ գործս չէ. քու կամոցդ կը թողում: Ահա երկրորդ հաշուեցոյցը:

Ռուբէն լախտի հարուածէ մը ջախջախուածի պէս ինք իր վրայ կեքր էր. այլ ևս չէր ճաշեր. նայուածքէն կը գուշակէր թէ իւր առասպել ունին կը դնէր կնոջը խօսքերուն. բայց հաշուեցոյցն աչքին սուշեւ էր, աներոջը գիրը կը ճանչնար, փեսաս՝ Ռուբէն աղայից պահանջքը, որոշ տառերով նշանակուած էին թղթին վերեւ և գումարն էր 1028 սակի, ստորագրեալ Յովհաննէս ձեռնակեան, ամէն տարակոյս կը փարատէր. այսպէս՝ Ռուբէն վերստին կը հարստանար: Թերեզա՝ իրեն միանգամայն կին, սիրուհի, խնամածու և բազդ եղած էր. այժմ՝ չափազանց երանութիւնը կ'ընկճէր զՌուբէն. գէմքին այլայլութենէն կը նշմարէր թէ սիրտը փոթորկայոյզ զգացումներու ծով էր դարձեր, չրթուքները պրկեցան և տեսայ որ աչքերը լեցուեր էին...

— Կ'արժէ Թերեզային կենացը խմել, ըսի. Երեքս ոտք ելանք և բաժակները բաղխեցինք, Ռուբէնի ուրախութիւնը կը պոթկար, յանկարծ բռնեց կնոջը ձեռքը և կուշտ մը համբուրելէ յետոյ ճակարին տարաւ, յարգալիր ակնածութեամբ:

— Ո՛հ, այդ կը վայէ՞, սիրելիս, աղաղակեց Թերեզա, ինքն ալ ամուսնոյն երկու ձեռքերը միանգամայն բերնին ու ճակարին տանելով, դու իմ սպակս ու պաշտպանս

ես. եթէ քու երջանկութեանդ կ'աշխատիմ, պատճառն այն է որ կը սիրեմ քեզ, և փառքըն ու հաճոյքը քեզմով կը վայելեմ:

Ես ալ սաստիկ յուզուած էի այս տեսարանին առջեւ, և չկրցի արգելուել զիս՝ երանի կարգալէ այս ամուսին, որ գիտցեր էր արքայութեան կենօք տարիլ երկրի վրայ:

Ը.

ՈՐՈՇՈՒՄԸ

Ճաշն աւարտելէ յետոյ վերստին նախորդ սենեակը դարձանք. հարկ եղաւ քառորդ մը սպասել մինչեւ որ Թերեզա Հրանտին և Ջարուհիին ճաշել տայ. այդ միջոցին ես և Ռուբէն սուրճ առինք և ծխեցինք:

— Կը տեսնես որ Թերեզայիս վրայօք անցեալ օր ըրած գովեստս չափազանց չէր. շնորհապարտ եմ ձեզ որ ասանկ աշակերտուհի մ'ունեցեր էք:

— Այդ ինձ համար ալ միթարութիւն և փառք է, ըսի. կը խոստովանիմ՝ սակայն որ գլխաւորապէս ընտանի կրթութիւնն այսպէս կրնայ պարտաստել աղջիկները, հրապուրիչ, ժրագլուխ և առաքիլի:

— Ուսումն ալ մեծ դեր կը խաղայ. երբեմն գիրք մը կ'առնու ձեռքը հայերէն կամ գաղղիերէն, զոր ջուրի պէս կը թարգմանէ, և պարագային յարմար անանկ տեղ մը կը կարգայ ինձ, ուր սքանչելի խրատներ ու օրինակներ լի են. ապականիչ ու թեթեւոյիկ գրուածներէ բնաւ չախորժիր. ես ալ իրմէ կ'աղղուիմ:

Նոյն միջոցին Թերեզա ներս մտաւ և երախտան գիրկն առնով նստաւ մեր քով. երկու մեծերն սպասուհւոյն յանձնեցին էր:

— Ընտիր գրքեր ունիք եղբր, ըսի:

— Գրագարան մ'ունիմ արդարեւ, բայց վտահ եղիք որ բոլոր մատեններս միտք ու սիրտ շինող նիւթեր միայն կը պարունակեն. խմատասիրութիւնն ու պատմութիւնը շատ հաճելի են ինձ. ունիմ նաեւ կնոջ ու մօր պարտականութեանց վրայ խօսող լաւ գրքեր. բայց թողունք իմ անձս և օրուան խնդրոյն դառնանք: Հիմա կ'աղաչեմ որ Ռուբէնիս խորհուրդ մը տայիք հետեւելիք ուղղութեան վրայ. նախ, պէ՞տք է ծնողացս քով վերադառնալ և անոնց հետ բնակիլ, երկրորդ, ի՞նչպէս գործածել այս հազար սակիի գումարն, ըստ որում հայրս կ'ուզէ անպատճառ մեզ յանձնել զայն, առարկելով թէ այլ եւս ձերացած է և չկըրնար չափազործել:

Ռուբէն փութաց յայտնելու որ աներոջն ու զքանչին հետ բնակելու յանձնառու կը լինի, քանի որ Թերեզա այնպէս կը փափաքի՝ գալով դրամին գործածութեան, կ'ուզէր անով կալուած մը գնել ու կնոջն անուն արձանագրել տալ:

— Ամէն կամացդ կը հպատակիմ, Ռուբէն, պատասխանեց Թերեզա, բայց կալուածին իմ անունս արձանագրուիլ մի՛ բսեր ուրիշ անգամ ալ. այրը պէտք է հարուստ ու զօրաւոր ըլլայ. զիս քեզմով կը ճանչնան. քեզմով կը պատուեն. ուրեմն դու որչափ բարձրանաս, զիս կը բարձրացնեն, և մարդիկ տակաւին նիւթը կը պաշտեն. պէտք է բարձրանալու համար նիւթով երեւիս անոնց. քանի՞ փարայի մարդ է կ'ըսեն:

— Այդ մասին դժուարութիւն մը չկայ,



յարեցի ես ալ, այր ու կնոջ մէջ խտիր պէտք չէ լինի. երբ որոշէք կալուած մը գնել, արձանագրել կուտաք զայն Ռուբլն է՛ք. Ի անուան, և եկամուտը Թերեզային կը յատկանայ:

— Եթէ Ռուբլն կը ներէ, իմ կարծիքս ալ յայտնեմ, ըսաւ Թերեզա. եւ երբ նա հարցուց իրեն, « Հայրս արդէն ծերացած է, յարեց, և գործելու նախկին եւ առնողը չունի վերջին անգամ այցելութեանը միջոցին, իր սէրը քու վրայէ զարթուցանելէ և գործունէութեանը մասին տեղեկութիւններ տալէ յետոյ, ազաչեցի որ այդ հազար ոսկիով զքեզ իրեն ընկեր ընդունի. քիչ մը խորհելէ յետոյ, մօրս թախանձանայ վրայ հաճութիւն ցուցուց. մայրս ալ զիս սիրելուդ համար այնքան համակրեցաւ վրայ, որ ամուսնանալէն ի վեր քեզի քեզի հաւաքած գրամներն, առանց տոկոսի, իբր փոխառութիւն, քու դրամազխոյդ վրայ աւելցնել խոստացաւ. կարծեմ ընդ ամէնը 1300 ոսկի կ'ունենաւ. առնոց հետ բնակելով մեր ծախսերն ալ կը նուազին. հօրս գործերը, մանաւանդ քու ժրջանութեամբ, աւելի կ'ընդարձակուին և աւելի շահաւոր կ'ըլլան, արդի ծառայական վիճակիդ ալ կ'ազատուիս, և Աստուծով՝ քիչ ատենէն դարձեալ ձեռք կը բերես այն քսան հազար ոսկին, որու արժէքը չէիր գիտցեր պատանութեանդ ատեն: Կը խնդրեմ որ այս մասին երկուքնիդ խորհելով որոշում մը տաք:

Կ'ըսանչառայի այս դեռատի կնոջ հնարամտութեան, համազկեր խօսքերուն, և խոհուն դիտողութեանը վրայ: Ռուբլն, առանց ու է գիտողութեան, հաւանեցաւ կնոջն առաջարկութեան և ես ալ յորդորեցի զիրենք՝ որ յառաջ իրագործելու այս մտադրութիւնը:

Թ.

## ՀԱՅԱՍՏԱՆ

Ռուբլն իւր կնոջ ստուերն եղած էր և ինքզինքն իշխան կը կարծէր:

Խօսքս Թերեզայի ուղեւորով ըսի. Ամուսինդ անցեալ օր ըսաւ ինձ թէ դու իր բոլոր կամայ, թեթեւ հաճոյցն անգամ կը համակերպուիս, կը տեսնեմ արդարեւ որ շատ հաճոյակատար ես իրեն. . . :

Խորամանկ ժպիտ մը երեւցաւ շրթանքը վրայ և « այնպէս կը հաւատայ, այնպէս է և այս իւր երջանկութիւնն է » պատասխանեց. և յարեց. — Ռուբլն չէր կամակիր բնաւ որ ձեր առջեւ աղատ խօսիմ, ընդհակառակն գոհ կ'ըլլայ. ամուսնութեանս առաջին տարին երջանիկ չեղանք. անգործ էր և նեղարտութենէն երբեմն կը շարժուէր զիս. ծնողքս ուղեցին միջամտել, հասկցայ որ հետեանքը գթութիւն և դուցէ բաժանում պիտի ըլլայ. թողուցի զիրենք և այր ու կին գնացին քանակի մը մէջ սենեակի մը վարձեցինք. Սակայն երջանկութիւնը հեռի էր մեզմէ. օր մը միայնակ խոսակցող Արծրունի Տ. Գիւրգ. քահանային զիմեցի և վիճակս խոստովանեցայ իրեն. « Աղջիկս, ըսաւ, քաղցրութեամբ վարուէ ամուսնոյդ հետ, բնաւ յանգիմանութիւն կամ գիտողութիւն մի՛ ըներ իւր վարմանը համար, ժպտուն և զըռուարթ գէ՛մք ունեցիր, տիրութեանը միջոցին միտմարէ զինքն և Աստուծոյ ապա-

ւինել յորդորէ, ծայնիդ մէջ բնաւ հրամայական չեղաւ մի՛ դներ, խորագէտ յարգէ զինքը, զի նա է քու գլուխդ և պսակդ. աշխատէ և ձեռնառու եղիր իրեն՝ առանց իւր անուշութեան մեծութիւնը քամահրելու. յուսադրէ զինքը, ծախողութեան օրերէն յետոյ յաջողութեան օրերուն մօտենալն յիշեցուր իրեն. իւր ցամաքն ու մութութեանց գէ՛մ մի՛ մաքառիր յայտնապէս, այլ համբերող եղիր ու կամակատար երեւցիր. եթէ ամուսնոյդ սրտին խորը մանանելի հատի չափ ազնուութիւն կայ, քիչ ատենէն կը մեծնայ և կը ծառանայ այն. օ՛հ, աղջիկս, Աստուծոյ օրհնութեանը կը յանձնեմ զքեզ »:

Սիրտս հանդարտած՝ ատեն վերադարձայ, աւելցուց Թերեզա. քահանային խրատները վրկարար ազդեցութիւն ըրին վրաս, ինքնիրեն ալ խորհեցայ որ ամուսնոյս հանգէպ անընկճելի զօրութիւն մը ըզգենում. կանայք զուրկ են բիրտ ուժէ, որ արանց բաժինն է. բայց ունին իրենց յատուկ զօրութիւնն, որու առջեւ առնութիւնը կը տկարանայ, զինտիպի կ'ըլլայ. ո՞վ կրնայ անողոք, վայրագ ու անխոցելի մնալ կնոջ հրապոյրին, զգուանքին, ժըպիտին ու քաղցր լեզուին առջեւ. ուստի որոշեցի ամուսնոյս հետ վարուելու եղանակս և գործի սկսայ. Ռուբլն չուսով անձնատուր եղաւ, և երկուքնիս ալ երջանկացանք, երկուքնիս ալ կ'օրհնենք այն ծերունի քահանան: Ուրեմն, գաստիարակս, մի՛ հարցունէք թէ ամուսնոյս կամայն ու հաճոյցն ինչպէս կը հպատակիմ. Ռուբլն զիտէ որ ամէն ինչ իւր ուզածին պէս կը կատարուի. այս բաւական է իրեն ալ, ինձ ալ:

Հիացած, սքանչացած՝ հրաժեշտ տուի Թերեզային և բաղդաւոր Ռուբլին, և զիմեցի երկաթուղւոյ կայարանը, ժամ յառաջ Պէպլէի չոգենաւն համեմու համար:

Հարուստ ու բաղդաւոր վաճառականի համբաւ ունի այժօր Ռուբլն. յաջորդած է իւր հանգուցեալ աներով և Թերեզային հետ կ'ապրի երջանիկ իշխանի պէս:

Երկիրքէն երեք խնձոր ինկաւ.

Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

## ԶՈՐՍ ԱՆՍԱՀՆԵՐԸ

Նորութիւն մը սկսած է երեւիլ այժմ մեր գրականութեան մէջ. Հայ նշանաւոր անձերու, որք այլ ևս չեն ապրիր, այլ կը ննջեն ի հող տապանի, կենսագրութիւնները ի լոյս աշխարհ հանելու գովելի փափաք մը կայ: Արդարեւ երբեմն երբեմն եղան մեր ազգին մէջ գրասէրներ, որք գրական այս ճիւղը մշակելու յօժարաւորութեան հանդիսացան: Օմանեան Հայոցս մէջ իրրեւ կենսագիր՝ առաջին եղած է Ստեփան Էֆ. Փափաղեան, որ գրեց ընդարձակօրէն Պէզ-ճեան Յարութիւն ամիրայի կենսագրութիւնը, այն բարերար անձին, զոր այժմ դրուատելն աւելորդ է: Նաեւ նա հրատարակեց Իզմիրի Մեսրոպեան վարժարանի նշանաւոր տեսուչ և ուսուցիչ Ռուբլն-Անդրէաս Զ. Փափաղեանի կենսագիրը: Յետոյ այս գրական ճիւղն ոչ նուազ նաեւ մշակեց Յակոբ Էֆ. Պարոնեան, որոյ ջոջերն արդարեւ գեղանշոյլ հրատարակ են, որք և երգիծական համեմութեամբ ալ աւելի սի-

րուն են և յաւէտ արժանի՝ ընթերցանութեան: Իսկ այս անգամ Աբրահամ Էֆ. Այվազեան Հայ-գրականութեան այս ճիւղը մշակելով, ահա ի հրապարակ կը հանէ իւր ՇՍԲը, զոր իբր համեզ շարոց մը կը հրամայեն այն բերաններուն, որք գրասիրութեան լաւագոյն ունին ճաշակը:

Թէ ինչու պէտք կայ կենսագրութեանց. — վասն զի ամէն ատեն ամէն տեղ կան այնպիսի շնորհազեղ անձեր, որք մանկապի նման կ'աքօղին, թփերու տակ կը պահուրտին. համեստութիւնն է որ զայս նոցա ընել կուտայ: Նոքա կը թողուն որ եթէ ունին յիշատակելի կեանք, զայն ուրիշները հաշակեն: Այս կարգէն չէլին նաեւ մեր հին նախնիք, որք գրական ահագին գործեր ունեցան, ուրիշներու կեանք տուին, ուրիշներուն կեանքն անմահացուցին, այլ թողով իրենց կեանքը մթութեան մէջ: Այսօր կարելի է գիտնալ ճշդիւ թէ Ոսկերեւանի գրուածոց թարգմանութիւններէն ո՞ր մասը, կամ ամբողջը ո՞րունն է: Նոյն խի Աստուածաշնչի ո՞ր մասը կամ ամբողջը Սահակայ է թէ Մեսրոպայ և թէ մեր թարգմանիչներէն ո՞րն այդ հսկայ թարգմանութեան մասնակից եղած է: Եթէ մեր նախնեաց յաջորդք գրեցին, ժամանակն ուրեմն ջնջած է, իսկ եթէ չգրեցին, պարտաւելի են և յաւիտեան ապերախտ եղած են առ այն լի ու լի շնորհս՝ իրենց բարերար ու երախտաւոր պապերուն:

Շարն ահա հրատարակուած է այս նուիրական կրկին նպատակով. առաջին, կեանք տալու յօժարաւորութեանը եղած է նոցա, որք գրեթէ մենէ դար մը առաջ ապրած ու ննջած են, ծառայելով Հայ գրականութեան: Երկրորդ, ազգին կողմէն երախտագիտական արձանագիր մը դրուակել, համարյա մը տալ նոյն սուրբ գերեզմանաց: Ո՛ր երախտագիտութիւն, զքեզ հիները չսաշտեցին, մինչեւ անգամ ամէն տեսակ զգացումն իւր աստուածն ունեցաւ, այլ ոչ դուն: Եւ ինչու պաշտուէիր պիղծ բերաններէ, քանի որ դու հանապաղ կը սաշտուիս երկնքի մէջ հրեշտակային ամենասուրբ բերաններէ:

Շարին մէջ առաջին անգամ կը յիշատակուի Գիւրգ պատուելի Պալատեցի, որ ծներ է 1737ին: Քաջահմուտ եղած է Հայերէն, Թուրքերէն, Պարսկերէն, Արաբերէն, Եւրոպերէն, Յունարէն, Լատիներէն լեզուաց: Իւր երկասիրութիւնը բաղդաւոր է, այլ իւր ամենամեծ փառքն է զիւտը զոր ըրաւ և որ ցնցեց քրիստոնէական և իմաստասիրական բովանդակ աշխարհը: « Եւսեբեայ Քրոնիկոն » կորսուած էր, ոչ Յոյն բնագիրը կար և ոչ թարգմանութիւնը: Ինքը գրեթէ հրաշխք ձեռք անցուց զայն: Եւ վկանակի Միտիթարեան միաբանութեան յանձնեց ի տպագրութիւն: Այս թարգմանութիւն աղբիւր եղած է Եւսեբեայ Լատին ու Յոյն և յայլ լեզուս նոր թարգմանութեանց:

Շարին մէջ երկրորդ է Մատթէոս Դպիր որ նշանաւոր եղաւ Հայոց մէջ ծաղկեցնելով տպագրութեան արուեստը, 1776ին կը տպէ տօնացոյց, յետոյ օրացոյց գեղատառ, և գեղանկար պատկերներով և այլ բազում գրքեր: Իւր քոյրը, Բրաբիոն, մասն ունի եղբորը բոլոր աշխատանայ մէջ՝ իբր նօտար, այսինքն դպիր-կարգացող:

Շարին մէջ երրորդն է Զէնէ-Պօղոս, Ներսէս պատրիարքի մեծ հայրը. նշանա-



ւոր երաժիշտ ոչ թէ միայն առ մեզ, այլ և առ Թուրքս և առ Յոյնս. քիչ ու չատ Հայերէնի և Յունարէնի և քիչ մը լատիներէնի հմուտ. շատ աշակերտներ ընծայած է ազգին:

Զորքորդն է. Շարին մէջ Յարութիւն վարդապետ Ալամդարեան, որ ծնած է յԱթաթիսան 1796 սեպտեմբեր 25 ին: Մեծ վարժապետ, մեծ գրագէտ և մեծ բանաստեղծ: Ալամդարեան սիրելի էր Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին որ Նոր-Նախիջեան այս մեծ անձին գերեզմանին յայց երթալով, դառնապէս լացու և ըստ. «Ահ, եթէ ողջ ըլլայիր, դուն պիտի ըլլայիր Հայոց ազգին մեծագոյն փառքը»:

Այս չորս անձերու կենսագրականով կը վերջանայ Շարը, այլ որովհետեւ կարելի չէ որ վարդն անփուշ ըլլայ շարագիրն ոչ թէ երբեմն երբեմն ունի աւելորդ յաւելումներ, թէև և հետաքրքրական, այլ ցատկը տուքներ ալ. այս ցատկաւորներն ալ թէև սիրուն են, այլ քիչ մը տհաճութիւն կուտան ընթերցողին. զոր օրինակ. ի՞նչ պէտք կայ յիշատակելու թէ ի՞նչպէս Զմիւռնիայի Մսեր դպրոց Ներսէս կաթողիկոսին, Խաչատուր Արսլանեանց՝ Եփրեմ կաթողիկոսին, Լորդֆէթ Կրճիկեան Յակոբը՝ Մեծ-Պօղոս Պատրիարքէն, Զէնէ Պօղոս՝ Միւլիւք Յովհաննէս Պատրիարքէն — դեռ շարունակելի — ուրար առեր կամ սարկաւազ եղեր են: Շարագիրը գիտնալու էր թէ այսպիսի շարեր չեղելու չեն բնաւ կենսագրական բուն շարքէն:

Բայց ինչ որ ըլլայ, շարագիրն, որ հին գրողներէն է և շատոնց լուծ էր, արժանի է խրատասանաց: Նա այժմ կը խօսի, ուրեմն մեր սրտերն ևս արձագանդ տալու են նորա ճայնին, գոնէ այսուհետեւ մարգարտայեւ շարէ մեր գրականութեան անխոնջ մշակները, որք թէ և վերջին ժամանակներու մէջ ապրեցան ու մեռան, այլ արժանի են գրական արձանագրերու — գրքերու —, զորս ընթերցելով մենք ևս բաժնեկից կը լինիմք շարագիրն փառացն ու մխիթարութեան:

ՆԱՀԱՊԵՏ

Շարագիր՝ Արրահամ Յ. Այվազեան, տիպ Պաղտատեան, երեսք՝ 144, գին 6 զրուշ:

### ՄԱՆԱԹԻՈՅ ՎԱՆԲԵՐԸ

Ա. Անարժաք բժիշկի վանք. — Ուխտատեղի. քաղաքէն 2 ժամ հեռի՝ Փոննար պաշտի եղերքը, Ս. Փրկչեայ և Ս. Լուսաւորչեայ վանուց մէջտեղ, այս վանքերէն մէկ քառորդ ժամ հեռաւորութեամբ: Այժմ աւերակ է: Կ'աւանդուի թէ՛ Թագէոս Ա. ռաքեալ հոն այցելած է, թէպէտ ժամանակագրական սխալ մը կը թուի այս, զի Թագէոս Ա. ռաքեալ և Անարժաք բժիշկը չա'տ հեռի են ի միմեանց: Իւր շուրջ չեւերելի հին քաղաքի կամ գիւղի հետք:

Բ. Ս. Թորոսի վանք. — Ուխտատեղի. քաղաքէն 12 ժամ հեռու, Մուշովայ կոչուած գիւղէն 1/2 ժամ անդին: Դիրքը լեռնային է և օդատուն: Իւր առջեւն ունի աղբիւր մը Ս. Թորոս անուն, սառնահամ և առողջարար: Այժմ աւերակ է և ոչխարաց իւր արօտավայր և մականատեղի կը ծառայէ:

Գ. Ս. Լուսաւորչի վանք. — Երկրորդ ուխտատեղին Մելիտինէի Հայ հասարակութեան, քաղքէն 1 1/2 ժամ հեռի, ապա. ռաքեալ Բլրոյ մը վրայ. ունի աղբիւր մը բարեհամ և զովաջուր: Իւր շուրջը կ'երեւի ընկուղի անտառակ մը՝ ուր քաղքիս տեղացի և պանդուխտ մեծատունք տառու Յ. միս կը մնան ստէպ. ունի մի քանի մշակեալ արտեր և քաղաւ արօտատեղիներ: Մելիտինէի Առաջնորդք հոս կ'անցընեն իրենց ամառնային կեանքը. ունի փոքրիկ եկեղեցի մը և 20 սենեակներ՝ պարզ ու անշուք. ունի՛ նաև 30-40 այծ ու ոչխար. չունի միաբանութիւն և արտերը մասնաւորաց ձեւամբ կը մշակուին: Շինութեան թուականն անյայտ է, թէպէտ տեղացիք կը պնդեն թէ՛ 1500 տարուան է: Վանքին ճամբուն վրայ կ'երեւի ձոր մը ին սէրէ կոչուած, ուր կայ այր մը՝ որոյ մէջ կը բղխի աղբիւր մը: Այրին վրայ կայ կամուրջ մը զոր տեղացիք Մազէ կամուրջ կ'անուանեն. ասկից կ'անցնին ուխտաւորք Լուսաւորչայ հորը տեսնելու համար, ուր կ'ըսեն թէ՛ Ս. Լուսաւորիչ պատարագ մատուցած է: Ասկից քիչ վար կ'երեւի փոքրիկ այր մը, ուր կայ Սուրբին պատկերը՝ քարի վրայ քանդակուած պատարագչի զգեստով: Ըստ տեղական աւանդութեան՝ Ս. Գրիգոր հոս պահուած է եղբի իւր հալածանաց ժամանակ, Դիրքը՝ բարձրահայեաց, օդը առողջաւետ և անուշ՝ հոգեպարար. իւր շուրջը կ'երեւին քանի մը քուրդ գիւղեր՝ ինչպէս Զամուրի, Լայլն:

Դ. Կարմիր վանք. — Քաղքիս հարաւահողմը՝ 1 ժամ հեռու Ս. Կարապետի Պօղազ ըսուած ձոր մը կայ, որոյ հողը կարմիր է և ուր կը տեսնուին եկեղեցւոյ մը աւերակաց վերջին հետքերը: Ասկից թերեւս հետեւցուցած լինին թէ՛ Կարմիր վանք ըսուած վանք մը գոյութիւն ունեցած է հոն, Հո'ս ալ կայ աղբիւր մը՝ անուշ և պաղ. օդը մաքուր, և ուխտի գացողներ ալ կը գըտնուին երբեմն:

Ե. Ս. Փրկչայ վանք. — Գլխաւոր ուխտատեղի Մելիտինեցոց, Օրտուզու գիւղին մօտ՝ բլուրի մը վրայ, քաղքէն մէկ ժամ և Լուսաւորչայ վանքէն կէս ժամ հեռի: Ունի մէկ եկեղեցի՝ այժմ խորխուած՝ քարաշէն: Զունի միաբան: Ուխտաւորաց համար շինուած են 20-30 սենեակներ՝ բաւական գեղեցիկ և նոր: Քանի մը փոքրիկ արտեր միայն ունի վանքը, որոնք կը մշակուին ժամկոչին ձեռամբ, որ վանքին միակ միայնութեամբ անուան է: Այս վանք շինուած է, կ'ըսուի, Արքարու ժամանակ և 40 խորան ունի եղբի՝ ամենքն ալ Թագէոս Առաքելոյն ձեռամբ օծուած, և այս շատ հաւանական կը թուի մեզ՝ ի նկատ առնելով նոյն ժամանակի Հայոց մեհեաններու, կուտուններու և բաքիներու բազմութիւնն որոց սեղանները կրնան խորաններու փոխարինուած լինիլ: Վանքին տաճարը՝ յունական ճարտարապետութեան կնիքը կը կրէ: Սովորաբար ամառը հոս կ'անցնեն եղբր մելիտինէի Առաջնորդք: Օրտուզուի վանքին մէջ կը գտնուին քանի մը ձեռագիրներ՝ Շարական, ժամագիրք, Աւետարան եւ Յասմուռներ:

Զ. Ս. Անարմի վանք. — Ուխտատեղի, քաղքէն 8 ժամ հեռու: Ընդհանրապէս մը բարձր ժայռին վրայ կառուցուած, վերելքը դժ-

ուարին և ծանրատաղտուկ, այժմ աւերակ: Հոս կը տարուին ընդհանրապէս յիմարները զորս կը կախեն եկեղեցւոյն մէջ, ուր կամ կը բժշկուին և կամ կը մեռնին, և աւելի կը մեռնին բնականաբար: Յզի կանայք՝ մէկ ժամու դժոխային վերելք՝ մը վերջը՝ հոն կ'երթան երկնային խանդավառութեամբ և իրենց ձեռները կը խօթեն կենդանի հաւատքով մը՝ հոն գտնուած այրի մը մէջ, հանելու համար անկէց՝ զոհուած դառանց ոսկորներ: Եթէ ծուծով ոսկր ելնէ՝ աղջիկ, իսկ եթէ անծուծ ոսկր ելնէ՝ աղայ ծնանելու համոզումն ունին: Շատ մաքուր է օդը: Ստորոտէն կ'անցնի Եփրատ՝ մեծագըղորդ և ահարկու: Ունի սառնաջուր աղբիւր մը՝ նոյն անուամբ:

Է. Ս. Սարգսի վանք. — Ուխտատեղի ի Մշովայ. գիւղէն կէս ժամ հեռու, ընդհանրապէս մը ստորոտը՝ ձորի մը մէջ: Այժմ արտի վերածուած է: Օդն է առողջարար և շատ ախորժելի:

Այս վանքերու մէջ չեն գտնուիր գրաւոր յիշատակարաններ և հետեւապէս ոչ ոք կրնայ ըսել թէ՛ ե՞րբ և ի՞նչ պարագայներու մէջ շինուած են, և ո՞րոնք նստեր են անոնց մէջ:

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

### ՄԱՂԱԿԱՆՑ ՎԵՇԵՐ

Դիտէի ինչու չեմ ուզեր ես Ուրախ հոգով եւ անհարբ, Առանց վրէժի, անյոյգ անւեր՝ Գարնան ցօղով իջնել պարսէգ:

Քանզի ծաղկուեմ բուրմամբ մ'անցիմ Սէր շնչելով քէեւ ժպիմ, Այլ այդ սիրոյն մէջ եւ ժպիմ, Վաղ բոսմելու վրէժն հիւծիմ...

\*\*\*

### Ն Ա Խ Ա Ն Ձ Ս

Ես չեմ ուզեր դարձեալ այգուն, Մազես անխնամ, ըզգեսս անգարդ, Լանջս անյարգար արդարով վարդ, Ելնել պարսէգ ծաղկամբ բեղուն:

Սակայն նուէ՛ն կը սփռուիմ Նախանձէս՝ ք'է՛ր ծաղկանց հետք բոյր, Փրքումն անուշ, չքնաղ հրապոյր, Վայրկեան մը գէթ երբեք չունիմ...

ԵԻՏԵՐՊԷ

Հրատարակուեցաւ Պ. Դուրեանի Տաղի եւ Քասեղաբիւնի անուն գործոյն 12րդ ֆօնման: Կեդրոնատեղի՝ Պալենց գրատուն, թիւ 20, Զաքարեայ ճակար, Կ. Պոլիս:

Սեպտեմբեր 1907 թ. 12-րդ ֆօնման: Մալաթիայի Գալուստ էֆ. Մալաթեան երկասիրած է Պալենցաբիւնի Կենդանական Բնախօսութիւն անունով գրատառք մը խիստ օգտակար դպրոցական մանկանց և վաւերացեալ յոյսով: Խորհրդոյ: Տպագր. Ն. Կ. Պէրպէրեան: Դին 4 զրշ: Կեդրոնատեղին է Զարդարեան գրատունը, Պոլիս, Սուլթան Համամ:



## ԲԺՇԿԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

## ԱՐԻՒՆ ԹՐԵՆԵԼ

Մէկը՝ որ արիւն կը թքնէ՝ սարսափահար կը մնայ. իւր թաշկինակին վրայ տեսած արեան բարակ գիծ մը զինքը կը տգուռնեցընէ կամ նոյն իսկ կը նուաղեցնէ։ Այս սարսափը անկէ յառաջ կուգայ որ ժողովուրդը թոքախտաւոր կը նկատէ ամէն արիւն թքնողները։

Փութանք այս նախապաշարումը ջնջել. թքնուած արիւնը թոքերէ գոտ ուրիշ կողմէ ալ կրնայ գալ, ուստի և միշտ թոքախտի նշան չէ։

Թքնուած արիւնն կրնայ յառաջ գալ, 1<sup>0</sup> լինդերէն (ամանց լինդերը շատ գիւրաւ կը բացուին)։ 2<sup>0</sup> կոկորդէն, 3<sup>0</sup> քիթէն, 4<sup>0</sup> խոչափողէն, 5<sup>0</sup> սպունգէն, այսինքն բերնին ետեւի մասէն մինչեւ ստամոքսը գացող խոզովակէն, 6<sup>0</sup> ստամոքսէն։

Արեան թքանումն յառաջ կուգայ կոկորդին ուսէլէն (փողոցաւ, engine), կամ խոչափողի սլառովէն (խոչափատալ, laryngite), երբ ուռած մտտին մաղանման խոզովակներն բնդարձակուած են։ Հիւանդը հազաւ ճիգեր կ'ընէ, սրով արիւն պարունակող փոքրիկ խոզովակները կը պատռին և արեան փոքր կաթիլներ կ'արտադրեն։

Ռնդափոսք կոկորդին ետեւի կողմին հետ յարաբերութիւն ունենալով, եթէ այդ մասին մէջ արիւնահոսութիւն մը պատահի, արիւնը կրնայ հասիլ կամ ոնգունքէն և բերնէն, կամ միայն բերնէն։ Լեզուն վարընէլէ վերջ կոկորդին յատակը գիտելով՝ դիւրաւ կրնայ տեսնուիլ հիւանդութեան աղբիւրը։ Ստունգէն յառաջ եկած արիւնահոսութեանց պատճառն է ստունգին ուռած երակներուն պատռիլն. ըսել է այս արիւնահոսութիւնը ընդհանրապէս կերակուրը ուտուելէն վերջը կը պատահին։ Փալով ստամոքսի արեան, սա ընդհանրապէս սեւորակ է և թանձր թուքի ձեւով դուրս կուգայ։

Թոքերէն եկած արիւնը՝ բնդահաւասակն՝ կոտ կարմիր, շատ լոյծ և փրփուրով ծածկուած կը լինի, որ յառաջ կուգայ այդ արեան մէջ գտնուած օդոյ բաղմամբիւ պղպղջակներէն։ Թոքախտ չունեցող մարդիկ ալ շատ անգամ թոքային արիւն կը թքեն, սակայն կրնայ պատահիլ երկարատեւ ցընցատալի (պուստիլ, բուստիլ) միջոցին, սըրտի հիւանդութենէ, կուրծքի արուած սոստիկ հարուածներէ կամ նոյն իսկ ծանր բեռներ վերցնելէ. երբեմն զանազան ճիւղման յանկարծակիս ցոլումներով, ինչպէս կը պատահի օդափոխութեան ժամանակ անձանց և կամ լուրջ վնասումներէ, ջգային ցնցման միջոցին, եւս վերջապէս արեան թքանումներ ալ կան որ յառաջ կուգան սովորական արիւնահոսութեան մը, մասնաւորապէս թթախտութեան (մայսարլ, պասուր) դադարումէն։

Արիւն թքնելը անբուժելի թոքախտի մը նշանը չէ, կարելի է նոյն իսկ ըսել թէ այս նշանն կերպով մ'օգտակար է հիւանդին, որովհետեւ նորա ուշադրութիւնը կը հրաւիրէ անփութութենէն յառաջ եկած վնասանքին վրայ։

Դարմանումը. կարելի եղածին չափ շատ օդ. Ստուի պղտիկ կտորներ կ'ընէ. ի հարկին, սրուակ (հաճամաք շիւէսի, պոլյունգ) (Թարգմ.) Ե. Թ. Հ.

## ԾԱՂԱՆՑ ԼԵՁՈՒ

Ծաղկունք եւ նոցա խորհրդանշաններն

Անդէպ չէ կարծեմ՝ ԾԱՂԻԿի մէջ դնել Ծաղկանց Լեզուն, մանաւանդ այժմ՝ երբ ծաղկանց եղանակն հասած է սիրուն դարնան հետ։

Ահա թէ իւրաքանչիւր ծաղիկ ինչի՞ խորհրդանշան է.

Ագասիկ, զգաստ սիրոյ.

Ագասիկ դեղին, գաղտնի սիրոյ.

Ագասիկ, տօնի, օգտակար տեղեկութեանց.

Ականք (այլ փէշէսի), գեղարուեստից,

Աղանք (կիւղէրճին օթու), կախարդանքի.

Աղինուկ (հանքմէ չի), իմ ճակատագրիս

հանգամանքն.

Աղինուկ ամսեայ, սիրոյ կապի, առանին

երջանկութեան.

Աղինուկ գաղիական. շինական գեղեցկութեան.

թեան.

Աղինուկ վայրի, բուռն սիրոյ.

Ամարիլեակ, երկչոտութիւն. հպարտութիւն.

թիւն.

Ամբոսիկ, փոխադարձ սիրոյ.

Ամերիկեան գարնանամայիկ, «գուք իմ

նախախնամութիւնս էք» ըսելու.

Ամերիկեան գեղնախնձոր, բարեբարութեան.

Անանուխ, առաքինութեան.

Անթառամ, անմահութեան,

Անմոռուկ (forget-me-not) յիշատակի, ճշմարիտ սիրոյ.

Անուամայիկ, ջերմեանդութեան,

Առիւծագի, գաղտնի սիրոյ.

Առուոյս (եօնճա), վրէժխնդրութեան,

Ամաւենի, յաղթութեան.

Արեւայամբի (զմառաւ աղաճը), խղճի խայթի.

Արեւամայիկ, պաշտումի,

Ափարփի, մենաստանի,

Բաքսուկ, փոքրութեան,

Բաժակ ծաղիկ, բան մը չ'ակնկալելու.

Բաղեղ, միշտ հաճեցնել ջանալու.

Բանգ, պակասութեան.

Բարձուկեակ (չըվան շիշի), կատակ.

Բարբիոն (թէպէր), վտանգալից հաճոյքներու.

Բոգ, կուտական հպարտութեան.

Ս. Գ.

## ՄԻՐՏՈ

Ըզեկ, անգու՛ւր, սիրեցի ես, Տառապեցայ մի՞տք եկ համար, Սորեցաւ դէմս արցունքներէս. Բայց սիրս չէ սիրոյ՝ այլ կոյս մը քաւ։

Տառապեցայ օրե՛ր ի բուն՝ Մարմինս այրող ճիւղ մը դարձած, Ու խորհեցայ զի՛եքն անգուն՝ Ձեռուցանել քո սիրս սառած։

Պատահանիդ անցայ քակէն, Սէր երգեցի ցուրս գիւրեմե, Բայց, նե՛ս հասու, ակնարկդ անդէն հոգեց իմ սիրսն իբրեւ սուտ։

Եւ ըզգացի՝ որ իմ մարմնոյս Մէջ աւետում մը կը լինէր. Ա՛լ տգուցած, վրէժս, անյոյս, Զիս ուրուական ըրին յոյգեր։

Սուր ակնարկէդ ծակ ծակ եղած՝ Արդ ըսպունգ մէ սիրսս, գիտե՛ս. Այդ ըսպունգէն սեւ քանձաւմած Արիւն կարի, արիւն արեւս։

Կ'ըմպե՛ս ուրեմն այդ արիւնէն, Գուցէ նեկսար օրանցդ համար... —Այլ երբ խրմեա անյագօրէն, Դարձեալ սարսուռ մը չե՛ս ըզգար... ԵԻՏԵՐՊԼ

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ասն եւ կնոջ դիւրագայնութիւնը. — Բոլոր աշխարհ կը հաւատար թէ կնոջ դիւրագայնութիւնը ի վաղուց հաստատուած իրողութիւն մ'է. սակայն կերեւի թէ խաւարի բնախօսի մը, Այդար Լոմպրոսօի, փորձերն բոլորովին հակառակը պիտի ապացուցանեն ո՛չ միայն հաստատութեան համար՝ որ արանց քով երկպառակ աւելի է քան կանանցն, այլ և միւս զգայարանաց մասին ևս։ Դիտուած է որ անամոնց մէջ ևս արուներն աւելի դիւրաւ կը լսեն հեռուոր մեզմէ ձայները։

Լուսնագի նոր արբանեակը. — Պ. Պէրնար աշխարհիս ամենամեծ գիտական միջոցաւ սեպտ. 13ին գտաւ Լուսնի միջոցաւ հինգերորդ արբանեակը. այս հինգերորդ արբանեակը իւր շրջանը կը կատարէ 11 ժամ 50 վայրկեանի մէջ. առաջին չորս արբանեակը կալիլէ գտած էր 1610ին։

Մարդկային հասակ. — Ըստ բրիտանական մարդաշախի ընկերութեան, Եւրոպական ժողովրդոց հասակին բարձրութիւնը հետեւեալն է միջին հաշուով. Անգլիացին ուսնի 1,70 մ. հասակ (գործաւոր դասինը 1,74մ. կը հասնի). Նորվեգիացին՝ 1,70 մ. Դանիացին, Հունգարը և Հոլանտացին՝ 1,67մ. Զուիցերլանդացին, Ռուսը եւ Պէլճիզացին՝ 1,65 մ. Ֆրանսացին՝ 1,66 մ. Գերմանը՝ 1,66 մ. Իտալացին ու Սլոանիացին՝ 1,65 մ. Դարձանային անձրեւներ. — Բարբ Սէն Մօր օգերեւութաբանական դիտարանին հըրատարակած վիճակագրութեան կ'երևի թէ, վերջին 15 տարիներու միջոցին, 77-92, ի Ֆրանսա գարնան եղանակին մէջ տեղացած անձրեւոց ամենաշուտ եղած է 1880 ին, որովհետեւ այդ տարին անձրեւաշաղկապ արեւմտեան 3 ամսոյ մէջ տեղացող անձրեւոց համար 59 հազարորդամեզր ցուցուցած էր. թէ և վերջին տարուանը 67 եղած է, սակայն այս թուոյն միայն 10 և 7 հազարորդամեթրերն ապրիլ և մայիս ամսոց լինելով, երաշտութիւնը ամէն տարիներէ աւելի ըզգալի եղած է։ 1879ին այս թիւը 155ի բարձրացած էր։

Նախապատմական ոսկրներ. — Ատոլֆ Գարնօ վերլուծելով շատ մը անդրջրհեղեղեան քարացած ոսկրոտիք, գտած է որ առաջին և երկրորդ դարուց ոսկրոց պատշաճ կերպով Փիլիսօրի և փոսփորի քանակութեան մէջ մտաւորութիւն մը կայ, մինչդեռ Գ. և Դ. և մանաւանդ այժմեան ոսկրոց հետ բոլորովին կը տարբերի. Եթէ հին ժամանակաց ոսկրոց Փիլիսօրը 100 ցուցնենք, Գ. դարու ոսկրոց համար կը լինի 0,64, չորրորդին համար 0,35, և այժմեան ոսկրոց համար 0,05 կամ 0,06։

Անգործադրելի խրատ մը. — Գիտական



թերթ մը կ'ըսէ . երանի թէ մենամարտութեան և պատերազմի մէջ դորձած ուսած սուրերը նախ կրակի բոցին վրայէն անցուելով գործածուին . այս միջոցաւ՝ թունաւորեալ և կամ հիւանդութեանց միջոցներ կրող զէնքը մաքրուելով, գոնէ պատճառած վերքին բուժումը չդժուարացնէր . ինչ վեհմ խորհուրդ :

Երկնից լուսանկար . — Երկնալուսանկարը գիտական վերջին ամենափայլուն ձեռնարկներէն է . այժմէն իսկ սկսած է իւր օգուտները ցուցնել . Երկնային լուսանկարով՝ Մ. Վօլֆ և Շարլուա ցարդ անծանօթ 13 հատ փոքր մոլորակներ գտած են . փոքր մոլորակաց թիւը այժմ կը հասնի 335ի :

Կասաղործեան դարմանք . — Երբ կատաղութիւն կ'ըսեմք , Բասթիօրի դարմանը կը յիշեմք անշուշտ . սակայն կ'ըսուի նաեւ թէ Պ . Թիլզօնի և Պ . Սանթանի որք կատաղութեան դէմ ճագարներ և շունք պատուաստած էին , անոնց ներարկելով կատաղութեան դէմ պատուաստեալ շան արեան հիւթէն . կը հաստատեն թէ միւսնոյն եղանակաւ բժշկած են կատաղած ճագարներ ալ . մաղթեմք որ մարդու վրայ ևս յաջող արդիւնք ունենայ :

Մեծ զանգակներ . — Մօնմարթրի (Բարիլ) եկեղեցւոյն համար յատկացեալ զանգակին ծանրութիւնն է 25,000 քիլոկրամ , և կ'արժէ 100.000 ֆր . զայն հնչեցնելու համար 8-10 մարդիկ հազիւ բաւ են : Ասկէ աւելի ծանր զանգակներ կան . Մոսկուայի «հակայն» ծանրութիւնն է 300.000 լիվր (1 լիվր է 453 կրամ) . Ֆիլատէլֆիոյ «զարթուցանող զանգակ»ինը 150.000 լիվր , ի Փէքին 60.000 քիլօ ծանրութեամբ շատ զանգակներ կան . Մարսիլիոյ Նօթր-Տամի զանգակն ևս 18 000 քիլօ կրամ ծանրութիւն ունի :

Քաղաքացի օդը . — Անգլիացի դիտուն մը , Մ . Ֆէրսըն , հրատարակած է վիճակագիր մը , յորում կը տեսնուի թէ մեծ ճարտարարուեստ քաղաքացի օդն որչափ ապականեալ է . ի Լիւսէրն 5 խորանարդ հարիւրորդամեթըր օդոյ մէջ 3.500 փոշի և այլ մասնիկներ կան , որ ամենանուազ քանակութիւնն է . մինչդեռ ի Կլաքօվ նոյնչափ միջոցի մը մէջ 7 միլիոն հատ կայ . ի Բարիլ մարդ մը մէկ վայրկեանի մէջ 36 հատ սերմ կը շնչէ և ի Լոնտոն օրուան մը միջոցին ծխնելոյզներէն 350 տակառաշափ ծխոյ մասնիկներ ելնելով քաղքին վրայ կը տարածուին :

Ախտացեալ ծառեր . — Ի Բարիլ գումարեալ գիտնոց ընկերութեան ժողովոյն ներկայացեալ աշխատասիրութեանց մէջ կը յիշուի Պ . Տօթարտի մի երկն , որով կը յայտնուի թէ պտղատու ծառք եւս հիւանդութիւններէ կը վարակուին . Պ . Տօթարտ խնամորենայ և տանձենայ մասնաւոր հիւանդութեանց վրայ խօսելով կ'ըսէ , թէ կարծուածէն շատ աւելի մեծ է այն վնասն զոր այս հիւանդութիւնք կը պատճառեն :

Ֆրանսական դրամներ . — Ահաւասիկ այն թուանշաններն որք կը ցուցնեն թէ ըստ տասնորդական դրութեան որչափ դրամ պատրաստուած է ի Ֆրանսա 1789էն մինչև 1891 ղեկաւ . 31 . Պատրաստուած է սակի դրամ 8,755,865,130 ֆրանք արժէքով . արծաթեայ դրամ 5,312,508,326 ֆրանք 10 սանդիմ արժէքով . պղինձէ դրամ 63,339,027 ֆր . 30 սանթիմ արժէքով . այս ամենուն

գումարն է 14,133,716 984 ֆր . (Ճէյ Կուլտի հարստութեան դրեթէ 6 1/2 անգամը) . Այս դրամոց մէջ ամենէն շատ եղողն է 20 ֆրանքնոց սակի , դրեթէ 363 1/2 միլիոն . հինգ ֆրանքնոց արծաթ դրամ դրեթէ 1 երկիւնն 12 միլիոն , և այլն : 1891 տարւոյ միջոցին 20 ֆրանք արժէք ունեցող սակեդրամէ 871 100 հատ կտրուած է :  
ԱՅՆԹԱՊ ԹԱԹՈՒՆՔԻԵԼԱՆ

### ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԸՆ ԴՈՒՐՍ

Ծաղիկ միամիտէ հետէ նոր խմբագրապետի մը հսկողութեան տակ՝ բոլորովին նոր և թարմ ոյժերով կը պատրաստուէր ի հրապարակ ելնել , երբ քաղաքական աշխարհի մէջ այնպիսի նշանակութեան արժանի իրողութիւնք տեղի ունեցան , որք օր մի մարդկային կենաց պատմութեան մէջ կարեւորագոյն տեղ մը պիտի գրուէն : Աստղին կլատթօն յԱնգղիա իւր Իսլանտական ծըրագիրը բուռն պայքարով յառաջ մղել ըսկըսաւ՝ ամէն օր նորանոր ջանքերով հարուածներ տալով աշխուսակաւ — աւատակահայ : Ի Գաղղիա Ռիպօ-Պուրթուայի նախարարութիւնն ինկաւ և նոյն յաջորդեց Պ . Պ . Տիւրիւի նախարարութիւնն . այս անկման պատճառ եղաւ ինչ օր օր մը ի Գաղղիա ընկերական խնդրոյ մը զոյնն կոչուած է ստանալ . Ծերակոյտն բաժնեց ելեմոից ծըրագրէն՝ տհաս պտուղէ արտադրեալ ոգւոյն (ալքօօլ) մասն (1) , զայն մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ ընելու համար , ինչ որ նախապէս երեսփոխանական ժողովոյ կողմէն միացեալ էր ելեմոացոյցին մէջ , Ծերակոյտի սոյն օրոշումն , որ նախարարաց կողմէն ընդունուած էր հաճութեամբ , մերժուեցաւ երեսփոխանաց ժողովոյ կողմէն . և միանգամայն ժողովն զրացաւ վարչական ընթացքն երաշխաւորելու համար նախարարութեան խնդրած երկամի առժամեայ վարկն . աստի՛ հրաժարումն նախարարութեան . երեսփոխանական ժողովն ուղեց միանգամ եւս շնչեղ սա կէտը՝ թէ ինքն է ուղղակի աղագային կամքէն բխած ժողովն , հետեւաբար կը ժխտէ Ծերակոյտին հեղինակութիւնն իրբեւ գերագոյն ժողով , մասնաւոր տրոց խնդրոյն մէջ :

Ներկայ նախարարապետն , Պ . Շ . Տիւրիւի թէպէտ խեղացի , և զաւակ չափաւորաց դպրոցին , ինքն իսկ չյուսար որ իւր նախորդէն աւելի բախտաւոր կարենայ լինիլ , ըստ օրում իւր ընկերք մեծաւ մասամբ , ինչպէս նաեւ ինքն , նախորդ նախա-

(1) Գինովութեան առաջն առնուլ համար Գաղղիոյ աղագային ժողովը ծանրացուցեր էր տուրքն ալքօօլին՝ որ սովորաբար կը հանուի խաղողէ , եգիպտացորենէ , հասուն և փտած պտուղներէ և այլն . տհաս պտուղներէ պատրաստուած ալքօօլն ազատ թողուած էր այդ ծանր տուրքերէն , վասն զի արհեստաւորք տհաս պտուղներն երկ կը հաւնեն , աւելի քաջախ՝ քան ալքօօլ պատրաստելու համար . և քաջախը Գաղղիոյ համար առեւտրոյ մեծ աղբիւր մ'է . մեծ քանակութեամբ կը զրկուի Անգղիա , Պէլճիա և Զուիցերիա . այս վաճառականութեան կրելիք վնասն ի նկատ առնելով , Ծերակոյտը տհաս պտուղէ արդէն փոքր քանակութեամբ հանուած ալքօօլին վրայ երեսփոխանաց ժողովոյն կողմէն հաստատեալ տուրքն ուղեց առժամապէս ջնջել :

րարութեան անգամներէն լինելով , չեն բերեր իւրեանց հետ այն հանգամանքներն որ կարեւոր են սահմանադրական երկրի մը նախարարութեան կեանքը տեւական գործելու համար , որ է՝ բարոյական բացարձակ ազդեցութիւն երեսփոխանաց վերայ :

Սակայն և այնպէս , որչափ յեղեղուել և անստոյգ լինին Գաղղիոյ նախարարութեանց վիճակն ու կեանքն , անցողորար պէտք է յիշել իրբեւ անաչառ արգարութեան պարտք , թէ կարծես Գաղղիա իւր նախարարաց փոփոխմանց ազդեցութիւնը չկրէր . նա ստուգապէս իւր ներքին վարչական ուղղութիւնն ունի . անդ դատարարականութիւնն ամէն օր հզօր մղումներ կ'ստանայ , ելեմոտաքըն հսկայ միլիօններով կ'օժտուի . վաճառականութիւնը թուիչներ կ'առնուէր կրկին պարգեւելու համար նորանոր աղբիւրներ հարստութեան . գաղթականութեան ոգին կ'ընդարձակի , և ընդ նմին երկրին նաւատորմիկը կը զօրանայ մինչեւ անգղիական ծովային մեծ ազգին մտածում և տաքնաւ պատճառելու շափ : Գաղղիա մի և նոյն ժամանակ իւր ցամաքային զօրութիւնն այնպիսի վիճակի մը կը հասցնէ , որ իրաւամբ համօրէն Եւրոպիոյ պատկառանք և յարգանքը կը հրաւիրէ իւր վրայ :

Երբ Պիլմարք Իշխան երկաթէ ձեռամբ Եւրոպիոյ լծակը կը շարժէր , կընէին թէ ներկայ քաղաքական առեղծօւածն ի Գերմանիա պիտի լուծուի . այժմ այդ հեղինակութիւնը Գաղղիոյ կը վերաբերի : Գաղղիական մասնաւոր հնարագիտութիւնն այժմ ընդհանուր դրամական հզօր մրցում մ'է որ կը մղէ . ամէն պետութիւն Գաղղիոյ օրինակին հետեւելով իւր բանակն ու նաւատորմիկը կը զօրացնէ . անհուն միլիօններ կը ծախսուին և անհամար մարդոց աշխատութեանց շնորհիւ յառաջ գալիք բարիքն՝ աշխարհ կը զրկուի . եւ մինչ իրաց այս վիճակն զնւրոպա անօրինակ դրամական տաքնաւի մը կը մատնէ և ամէն կողմ հացի խնդիրը չըջահայեաց աշխարհավարներն խորին մտածմանց մէջ կը ձգէ , անդին Գաղղիական ազգն իւր յարափոփոխ նախարարութիւններով օր աւուր կը բարգաւաճի , գրեթէ ազատ այդ դրամական աղէտին ազդեցութեան :

Գ . Խ ՊԵՆԵԼԵԼԱՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պէնքիմկայի ծովուն մէջ մուշտակապատ փոկերու որսացման խնդրին՝ ի Փարիզ իրաւարար ատենի մը վճռոյն ենթարկուած է :

— Քոլումպիոյ կառավարութիւնն՝ կէս միլիոն ֆրանքի փոխարէն՝ 20 ամուսնան նոր պայմանաժամ տուած է Բանամայի ընկերութեան՝ վերականգնուելու համար : Վերա . կազմեալ ընկերութիւնը 10 տարւոյ պայմանաժամ պիտի ունենայ ջրանցքին շինութիւնն աւարտելու համար , և նոյն կառավարութեան պիտի վճարէ 7 1/2 միլիոն ֆր :

— Գերմանիոյ մէջ ապրիլի սկիզբէն փամբու միօրինակութիւն հաստատուեցան :



### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Արեւը ամբողջապէս պիտի խաւարի ապրիլ 4ին, բայց Կ. Պոլսէն մասնակի խաւարում մը պիտի երևի: Սաւարումը պիտի սկսի երեկոյեան ժամը 10ը 47 վայրկեան անցած և պիտի վերջանայ ժամը 12: 4ին: Տեւողութիւնն է մէկ ժամ 17 վայրկեան:

—Ամերիկեան դեսպանատան առաջին քարտուղար Պ. Նիւպէրրի կիւրակէ օր մայրաքաղաքս դարձաւ:

—Օսմ. Պանֆան մասնաճիւղ մը բացեր է յէնկիւրիւ:

—Վեհ Սուլթանը այս տարի ևս՝ Զատիկի առթիւ՝ բարեհաճեցաւ 750 ոսկի շնորհել Յունաց Պատրիարքարանին, 400 ոսկի՝ Հայոց Պատրիարքարանին, և 250 ոսկի՝ Հայ-Հռոմէականաց Պատրիարքարանին:

—Յունաց Պատրիարքարանին կողմանէ Զատիկի առթիւ՝ Վեհ. Սուլթանին մատուցուեցան ոսկեզօծ հաւկիթներ ու չէօրէֆներ՝ զարդարուն կողովներու մէջ դրուած: Հաւկիթներուն վրայ գրուած էին թուրքերէն Բահիւսհիւմ չօգ Էստա և յունարէն Զիքօ օ Սուլթանօս:

—Տպածոյի (պատմ) գործարան մը հաստատելու համար՝ արտօնութիւն խնդրելու մտադիր են մայրաքաղաքիս տպածոյի վաճառականը ուսանք:

—Սերասիոյ նամակատան մի քանի պաշտօնեայք գատի ենթարկուած են՝ Կայս. անձնական Գանձուն սեպհական 500 ոսկինոց աւանդի մը կորսուելու խնդրոյն առթիւ ամբաստանուած լինելով:

—Եւդոկիոյ չրջակայ մէկ գիւղէն Մալիք օղլու Յակօր գանակածեր ու գլխէն վիրաւորեր է Գալայճը օղլու Յակօրը, որ իւր առած վերքէն մեռեր է: Տօքթ. Գէորգ Շիրինեան տեղեկագիր մը տուեր է թէ մեռեալը կաթնուած է մեռած է, սակայն այս վերջնոյն ազգականաց բողոքին վրայ՝ դիւանութիւն կատարուած և հաստատուած լինելով որ Յակօր իւր առած վերքէն մեռած է, ընդհանուր դատարանն հարկ եղած միջոցները ձեռք առած է՝ թէ՛ ամբաստանելոյն և թէ՛ Տօքթ. Շիրինեանին ներկատմամբ օրինաց արամադրութիւնն ի գործ դնելու համար:

—Յէսիպիեհիւր, ոչխարի միսի գինն 3 դրուէն 8ի բարձրացեր է:

—Զմիւռնիոյ նահանգին մէջ ձմեռուան սաստիկութենէն հունձերն աւրուեր են, մանաւանդ ափսոնը, ցորենը և բակլան, ինչպէս և այլ ինքերը:

—Գօնեայի գաւառակաց մէջ ոչխարահամար կատարուեր է: Ագչէհրի մէջ ոչխարի տուրքն այս տարի 5745 դրուէ աւելի եղեր է: Գարամանի մէջ 7436 ոչխարք աւելի արձանագրուած են, Գօշհիսարի մէջ 16.516 և Պօզդըրի մէջ՝ 5336:

### ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարք Հայրը Ս. Զատիկի առաւօտուն Մայր Եկեղեցւոյ մէջ պատարագից և քարոզ խօսելով յայտնեց թէ վերջիւս պատիւ ունեցած էր Վեհ. Սուլթանին ներկայանալու և արժանա-

նալու Ն. Կ. Վեհափառութեան շնորհաց ու մեծարանաց, Հաղորդեց նաև ժողովրդեան՝ Վեհ. Սուլթանին Կայս. բարեկենդան և բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց և բարօրութեան Ն. Կ. Վեհափառութեան: Յաւարտ և կեղեցական արարողութեանց, Ս. Պատրիարքը Պատրիարքարան ելաւ և ընդունեց Մայր Եկեղեցւոյ քահանայից դասն, Թաղական խորհրդոյ և մասնաւորաց շնորհաւորութիւններն: Նոյն օրն ի Պատրիարքարան շնորհաւորական այցելութեան եկան նաև Անգլիական, Ռուսական ու Պարսկական դեսպանատանց առաջին թարգմանք, Գաղաքապետ Վոնմ. Բըտվան փաշա և Ոստիկանութեան նախարար Վսեմ. Նազըմ պէյ իրենց այցիտմանը զրկած էին: Յաջորդ օրը, Պատրիարքարանի պաշտօնեայք և ժողովաց անդամք, մայրաքաղաքիս մէկ քանի թաղ. խորհրդոց գիւնք, Աղգ. Հիւանդանոցի և Միացեալ Ընկերութեանց ներկայացուցիչք Պատրիարքարան երթալով, Ս. Պատրիարք Հօր ներկայացան և Զատիկի տօնը շնորհաւորեցին: Նոյն շնորհաւորական այցելութիւնք եղան նաև Երուսաղէմայ Պատր. Փոխանորդ Տ. Սիմէօն Արքեպիսկոպոսին և Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդ ճէվանիւրճեան Տ. Գաբրիէլ վարդապետին:

Զատիկի երկրորդ օրը, Պատր. Փոխանորդ Հայրն մի քանի եկեղեցականաց և աշխարհականաց ընկերակցութեամբ՝ շնորհաւորական այցելութիւններ տուաւ Յունաց Ս. Պատրիարքին ի Ֆէնէք և Պուլիարաց Ս. Էկիլարքին յ'Օրթադիւղ, Յաջորդ օրն ալ շնորհաւորական փոխադարձ այցելութեան գնաց Ռուսիոյ, Անգլիոյ և Պարսից դեսպանատուները:

Հինգշաբթի օր Աղգ. Պատրիարքարան փոխադարձ այցելութեան եկաւ Պուլիարաց Էքզարքարանի Դեր. Փոխանորդը, երէկ ալ Յունաց Պատր. Դեր. Փոխանորդը:

—Ի Ս. Երուսաղէմ, Հայ ուխտաւորաց թիւն այս տարի հասեր է 1200ի սորա եկեր են Պրուսայէն, Նիկիոմիդիայէն, Ատաբաղարէն, Ռոտտոթոյէն, Աֆիօն-Գարաշիսարէն, Ատանայէն, Ամասիայէն ու Փօքր-Ասիոյ ուրիշ քաղաքներէն, ինչպէս և Երեւանէն ու Հին-Նախիջևանէն:

—Ինչպէս կը յիշուի, Ս. Պատրիարքը ներումն շնորհած էր երբեմն կարգադրի Պէնլեան Մամրէ վարդապետին: Նորագոյն որոշման մը համաձայն, Մամրէ վարդ. երեքշաբթի օր մայրաքաղաքէս մեկնեցաւ՝ Գամասիոսի վանքըն երթալու և հոն ապաշխարելու համար, որպէս զի ապա ներման արժանանայ:

—Աղետալի արկած մը պատահեր է յԱրաբիկի՝ աւաղ ուրբաթ օր: Յերեկուան ժամը 6 1/2ին Աշաղը-Չարչուսը ըսուած տեղը գտնուած խանը, որ եկեղեցւոյն կա-

ռածներէն է, փեր է յանկարծ՝ երբ բազմաթիւ Հայեր հոն հաւաքուեր էին Զատիկան հաւկիթ խաղալու համար: Անմիջական օգնութիւնք հասնելով և պեղումներ կատարուելով, փրատակաց տակէն հանուեր են 40 մեռեալներ և 8 վիրաւորեալներ՝ ամենքն ալ 10էն 20 տարեկան: Վիրաւորեալք զօրանոցի հիւանդանոցը փոխադրուեր են ու կը դարմանուին: Խանին մէջ գտնուած 300ի չափ ջորիները փրատակաց ներքեւ մընալով, 15ը կորեր են: Պեղումները կը շարունակուին եղեր:

—Սիւլվէնէն (Պուլիարիս) ընդարձակ գրութիւն մ'ստացանք որ կը պարունակէ ծանրածանր ամբաստանութիւններ տեղւոյն Տ. Կարապետ քահանայ Սահակեանի դէմ: Տեղւոյն ազգայիններէն Տեարք Սիմօն Ունճեան, Յակօր Փափազեան, Նազարէթ Պօղոսեան, Կ. Գարակօղեան և այլք, նոյն քահանային դէմ ամբաստանագիր ներկայացուցեր են Թաղ. Խորհրդոյ, թուելով նորա յանցանքներն: Խորհուրդը քննութիւն բանալով, ամբաստանութեանց մեծագոյն մասին ճշդութիւնն ստուգեր է: Մեք չեմք կարող մեզ ուղղուած գրութիւնը հրատարակել՝ հանրային գայթակղութեան տեղի չտալու համար և յուսալով՝ որ Պատ. Թաղ. Խորհուրդն արդէն իսկ խոհեմաբար կ'ընէ հարկ եղած տնօրինութիւնն, խնդրեց ցաւալի հետեւանքներու չյանգած: Քանի որ քահանային վերադրուած այդ ծանրածանր յանցանքները քննութեամբ հաստատուած են և գժգոհութիւնն ալ ընդհանուր է իրեն դէմ, խնդրոյն վերջ մը տալու միակ միջոցը կը համարվիմք մեք՝ քահանային պաշտօնանկութիւնը և հեռացումը: Իսկ եթէ քահանայն անմեղ է և քննութիւնն անաչառապէս չէ կատարուած, մեղքը զրպարտիչներուն և թաղականներուն վրայ:

—ՄԱՆԱԹԻՍՅԱՆ մարտ 13 ին կը գրեն մեզ. Ծանօթ են արդէն այն պատճառներ որք դատապարտեցին ՎՏ. Սահակ Եպիսկոպոս Սահակեան՝ առաջնորդական պաշտօնը փոխելու մենակեցութեան առաջխաբանքի: Առաջնորդական Տեղապահի պաշտօնը կը վարէ Տ. Կարապետ վարդապետ Ռշտունի, խոհեմ, բանիւրուն և ուսեալ մի անձնաւորութիւն, որպիսի յաջողի ապահովապէս սիրաշահել Մալաթիոյ ողջոյն Հայ հասարակութիւնն, եթէ Սահակ Եպիսկոպոսի կուսակիցք քիչ մը բարեմիտ և քիչ մ'ալ անկեղծ լինէին: Զմարտութիւն է ըսել թէ, կիրքերու այս յուզեալ ժամանակին իսկ յաջողած է նա լուեցնել նոյն իսկ ամենէն յաջող միամիտներն: Յուսալի է թէ Տ. Ռշտունի պիտի կրնայ վերջապէս յաջողութեամբ ի գլուխ հանել իւր դժուարին պաշտօն այն խոհեմութեամբ որ իւր մեծագոյն արժանիքը կը կազմէ:

#### Ա Ր Ժ Է Բ Գ Ի Ռ Ա Մ Ո Յ

Օսմ. լեւան 100 գրչ. էն

|              |        |             |        |
|--------------|--------|-------------|--------|
| Մէճիտիյէ     | 107 29 | Վ. Եջնոց    | 101    |
| Քառորդ մէճիտ | 106 30 | Բուսիյի բօլ | 90 15  |
| Մանր մէճիտ   | 102 30 | Նարայէն     | 87 1   |
| Մէթալիք      | 95 10  | Գրիմից      | 51 16  |
| Հինգշոց      | 100 30 | Անգլ. լեւա  | 110 13 |

Մանէթ թղթագրամ 8 78

|              |       |            |        |
|--------------|-------|------------|--------|
| Գոնաղիտէ     | 26 18 | Բուս. երկ. | 92 5/8 |
| Թահվիլ. Օսմ. | 82 50 | Խաւարիք    | 17     |

#### ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱԳԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Լսկի-Չապթիէ փողոց, թիւ 61